«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա *՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան*

Հաստատություն *՝ Երևանի հ. 128 մսուր-մանկապարտեզ*

Դաստիարակ ՝ Նաիրա Միրզոյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»

1.1 Ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումը մանկապարտեզում՝ համապատասխան կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին.....5

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները……9

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում……13

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դաստիարակի մանկավարժական աշխատանքի մեկօրյա պլանավորում……17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը</u>: Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է մանկավարժական աշխատողի կողմից նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ պլանավորման ու անցկացման կարևորությամբ և անհրաժեշտությամբ: ՀՀ կառավարությունը 2021թ. մայիսի 13-ին հաստատել է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, որով սահմանվում են երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:

Ելնելով չափորոշչային պարտադիր պայմաններից՝ յուրաքանչյունր մանկավարժական աշխատող, համապատասխան կրթական վերջնարդյունք ձևավորելու համար պետք է հետևի նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային պահանջներին: Ուստի, հենց այս հիմնախնդրով էլ պայմանավորված է տվյալ հետազոտության թեմայի արդիականությունը:

Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է հանդիսանում նախադպրոցական կրթությունը: Վերջինս ամբողջական գործընթաց է՝ ուղղված նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Ակնհայտ է այն փաստը, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր երեխայի բնականոն զարգացման համար, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դեպի դպրոց երեխայի անցումը լինի առավել հեշտ ու սահուն: Կարևոր հանգամանք է նաև, որ նախադպրոցական մանկավարժական աշխատողը իրազեկ լինի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանած իր պաշտոնային պարտականություններին և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներին ու պարտականություններին:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ այս ամենը հենց այն հիմքերն են, համաձայն որոնց նախադպրոցական տարիքի երեխան մանկապարտեզում կլինի ապահով, կստանա

տարիքային առանձնահատկություններով պայմանավորված գիտելիքներ, հմտություններ, կարողունակություններ և դաստիարակություն:

Ավելին, մանկավարժի անմիջական պարտականությունն է նաև հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի սովորական միջավայրը յուրովի ընկալելու առանձնահատկությունը. ոմանք կարողանում են շատ արագ ընտելանալ նոր պահանջներին ու պայմաններին, նոր մարդկանց ու սովորույթներին, որոշների համար էլ առօրյայի անգամ աննշան փոփոխությունը սթրեսային է և կարող է լարվածություն առաջացնել նրանց վարքագծում, ընկալումներում: Այսպիսով, իր աշխատանքային գործունեության ընթացքում նախադպրոցական մանկավարժը պարտավոր է պահպանել աշխատանքի նկարագրի պահանջները՝ լիովին պատասխանատվություն կրելով սանի առողջության, զարգացման համար:

<u>Հետազոտության նպատակը</u>: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման ու իրականցման հիմնախնդիրները՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

<u>Հետազոտության խնդիրը</u>: Դիտարկել, համադրել ու տեղայնացնել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողը կարող է պլանավորել և անցկացնել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնական պարապմունքներ, հանդեսներ և այլ միջոցառումներ:

Սույն հետազոտական աշխատանքի տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից 2021թ. մայիսի 13-ին հաստատված նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, ինչպես շարք այլ աղբյուրներ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. «Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան»

1.1 Ուսումնական և դաստիարակչական խնդիրների իրականացումը մսուր-մանկապարտեզում՝ կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում աշխատող յուրաքնաչյուր մանկավարժ պետք է կարողանա լիարժեք պայմաններ ստեղծել երեխաների համապարփակ զարգացման և կրթության համար: Կրթադաստիարակչական գործընթացի առավել արդյունավետ իրականացման, նախադպրոցական կրթական չափորոշչային պահանջների բավարարման, պարապմունքների մեթոդական հագեցվածության ու մանկավարժական էթիկայի պահպանման համար պատասխանատու են ինչպես մանկավարժը, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատության բոլոր աշխատակիցները: Մանկավարժական աշխատողներն իրենց ամենօրյա աշխատանքում պետք է հաշվի առնեն սաների անհատական առանձնահատկությունները, նրբանկատություն և համբերատարություն ցուցաբերեն նախադպրոցականների, նրանց ծնողների և գործընկերների հետ շփվելիս: Նրանց գործառույթն է նաև երեխաների հետ պարբերաբար կատարել զարգացնող և դաստիարակչական աշխատանք:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինի կողմից հստակ սահմանված են նախադպրոցական մանկավարժների պաշտոնային պարտականությունները և յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է հաշվի նստել այդ պարտականությունների հետ: Նախադպրոցական ուսումնական հաստատության յուրաքանչյուր խմբի դաստիարակ անմիջական պատասխանատվություն է կրում կոնկրետ ուսումնական պարապմունքի պլանավորման ու անցկացման համար: «Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը՝ պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան, կատարում է ամենօրյա աշխատանք նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման և հարմարունակության (ադապտացիայի) համար, սաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրման և հոգեբանի հանձնարարականի վրա

պլանավորում և անցկացնում է նրանց հետ շտկողական, զարգացման աշխատանք, բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է սաների առողջության պահպանումը և ամրապնդումը, անցկացնում նրանց հոգեբանաֆիզիկական զարգացումը խթանող միջոցներ, պատասխանատու է նրանց կյանքի և առողջության համար, կազմակերպում է սաների օրվա ռեժիմը, օգնում է գեղագիտական, մարզական տարաբնույթ սեկցիաներում ուսուցման, ժամանցի կազմակերպմանը և լրացուցիչ կրթություն ստանալուն և այլն[1]»:

Անասելի մեծ է նախադպրոցական մանկավարժի մարդկային բարձր որակների առկայության անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է հարգալից վերաբերմունք յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, մանկավարժական տակտի դրսևորում երեխաների հետ շփվելիս, հանդուրժողականություն ու հավասարության սկզբունքի պահպանում: Այստեղ առանցքային է նախադպրոցականի տարիքային առանձնահատկությունների հաշվի առնումը: Դաստիարակն առաջին հերթին այն մարդն է, ով մշտապես երեխաների կողքին է՝ խմբում, զբոսանքի, ճաշի և քնի ժամանակ: Վերջինս պետք է անդադար զգոն լինի ու վերահսկի սաների բարեկեցությունն ու անվտանգությունը: Նախադպրոցականների հետ տարվող ուսուցման ու զարգացման ոլորտները տարբեր են, այնուամենայնիվ, անկյունաքարային են հետևյալ հիմնական թեմաները՝

- Ֆիզիկական զարգացում, ֆիզիկական առողջություն
- Մաթեմատիկական իրազեկում
- Խաղ, ժամանց
- Ստեղծագործական և գեղագիտական զարգացում
- Անձնային, սոցիալական, տնտեսական և էմոցիոնալ զարգացում
- Գիտական մտածողություն
- Ինքնասպասարկման հմտություններ

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=67862 «ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար եվ մանկավարժական կազմի տարիֆառակավորման բնութագրերը հաստատելու մասին»

- Գրագիտություն
- Հաղորդակցման հմտություններ, եկխոսելու, մենախոսելու կարողություն
- Թիմային աշխատանք

Ցանկացած տիպի ուսումնական պարապմունք իրականացնելիս կարևոր է, որ երեխաները լինեն անկաշկանդ, ոչ մի դեպքում չի կարելի երեխային դնել կաղապարների մեջ, պետք է սաներին տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու հնարավորություն: Նկարչության, երաժշտության, մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ ևս հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն խոսքը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը, տրամաբանական մտածողությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ նախադպրոցականը կարողանա սոցիալականացվել, դրսևորվել: Այս ամենը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար, հարկավոր է, որ մանկավարժման աշատողները քաջածանոթ լինեն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչային պահանջներին, որը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը[2]:

Երեխան պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի հասարակության մեջ իր տեղը գտնելու համար: Խոսել սովորելով՝ երեխան նախ շփվում է ծնողների, այնուհետև նաև այլ մարդկանց հետ, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ համատեղ գործունեությունը կարող է լինել խաղ, ուսում, իր ուժերի չափով աշխատանք: Այդ ամենի ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը, հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Սոցիալականացումը երեխայի կողմից շրջապատի սոցիալական նորմերի յուրացման գործընթացն է: Ուստի այս պարագայում նույնպես

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:

կարևոր է դաստիարակի կողմից նպատակային և արդյունավետ պլանավորված քայլերը: Խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը՝ որպես երեխայի խոսքի հարստացման աղբյուրի: Գեղարվեստական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանն ու զգայականի փորձի հարստացմանը, իմացական գործընթացի ակտիվացմանը: Այս պարագայում տեղին է նախադպրոցականի համար շատ ընթերցել, թույլ տալ, որ վերջինս ակտիվ մեկնաբանի հեքիաթը, առակը, պատմությունն ու բանաստեղծությունը: Այսպես զարգանում է նախադպրոցականի ակտիվ խոսքը: «Ակտիվ խոսքի կարողությունները պայմանավորված են աստիճանաբար հարստացող պասիվ բառապաշարով, որը զգալի հզոր է ակտիվից: Խոսքի ձևավորումը վաղ տարիքում ընթանում է հետևյալ հաջորդականությամբ. Ընկալվում և յուրացվում է բառի իմաստային նշանակությունը, այդ բառերն իրենց տեղն են գտնումերեխայի պասիվ բառապաշարում, որից հետո դրանք ակտիվանում են»:[3] Շատ նախադպրոցականների մոտ խոսքը անվստահ է, հաճախ ոչ ամբողջական ու մեխանիկական, ուստի և մանկավարժն իր հնարներով ու մի շարք մեթոդական գործիքներով կարող է խթանել կապակցված խոսքի բնականոն զարգացմանը: Աներկբա է, որ այս փուլում երեխան ունի այդ օգնության կարիքը: Լեզվի միջոցով է, որ երեխան բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար: Երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակներից է նաև շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձեռքբերումն ու բանավոր խոսքի զարգացումը: Խոսքի զարգացման հիմնական խնդիրներից են ճիշտ արտահայտվելու կարողությունը, բանավոր խեսքի հարուստ բովանդակությունը[4]: Նախադպրոցականի մոտ կապակցված խոսք և հաղորդակցվելու կարողություն ձևավորելու կարևորությունը սահմանված է նաև նախադպրոցական կրթության պետական չափորոշրով, ուստի և դաստիարակը պետք է մեծ ուշադրություն դարձնի սաների լեզվական և հաղորդակցական կարողունակության զարգացմանը, որի դեպքում երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում

[3] Ա. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն», էջ 33:
[4] Ն. Մկրտչյան, «Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա», Երևան 2019, էջ 6:

տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք[5]:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ նախադպրոցականի արդյունավետ կրթությունն ու զարգացումը մանկապարտեզում մեծապես կախված է մանկավարժական բոլոր աշխատողների մարդկային, մասնագիտական որակներից, ինչպես նաև իրենց գործառույթներն ու պարտավորությունն իմանալուց:

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (այսուհետ՝ չափորոշիչ) հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմքում նախադպրոցականների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներն են, որոնք ներառում են ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները: Չափորոշչում հաստակ ամրագրված են ուսումնական պարապմունքների, դրանց

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:

բովանդակության, ծանրաբեռնվածության, երեխաների հետ տարվող աշխատանքների, մշտադիտարկումների ու կարիքների գնահատման երեխաների մասին դրույթներ: «Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը»6:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը կազմում են նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ըմբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և տարրական բարոյական արժեքային հարաբերությունները:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ,
2) խոսքի և հաղորդակցական ոլորտ,
3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ,
4) իմացական ոլորտ,
5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներում ավելացել է նաեւ օրենքի գաղափարի և կարևորության հիմունքների հետ ծանոթացման ներառումը: Այսինքն՝ երեխան, բացի խոսքի, տրամաբանության, մտավոր, ֆիզիկական, գեղարվեստագեղագիտական

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:

զարգացման, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումից պիտի որոշակի տեղեկություններ ունենա օրենքի մասին:

Հավելենք նաև, որ չափորոշչով տրված են նաև խմբասենյակների ձևավորման հիմնական պահանջները, թե ինչ սարքավորումներ ու խաղալիքներ և նյութեր պետք է ապահովվեն երեխայի ներդաշնակ զարգացման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու նյութերը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին և սահմանված առողջապահական նորմերին:

Չափորոշչում սահմանված են նաև երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները՝ ըստ տարիքային խմբերի: Օրինակ՝ մինչև 1 տարեկան երեխաները պետք է ապահովվեն մանկական երաժշտական գործիքներով, նկարազարդ, կտորից գրքերով, գունավոր մատիտներով, ճոճանակով եւ այլն: Մահճակալների վերևի մասում պետք է տեղակայված լինեն չխկչխկաններ:

1-ից մինչև 3 տարեկան երեխաների խմբասենյակում պետք է առկա լինեն խճանկարներ, «մատրյոշկա» տիկնիկներ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, գունեղ նկարներով գրքեր, գրենական պիտույքներ:

Իսկ 3-ից մինչև 6 տարեկան երեխաների խմբասենյակում նախատեսվում են բազմապիսի դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ (դոմինո, շաշկի, շախմատ և այլն), ազգային եւ այլազգի կենցաղի առարկաների նմուշներ:

Չափորոշչով նախատեսվում է շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար խմբասենյակում և դրանից դուրս ունենալ հարմարեցված աթոռ-սեղան, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ՝ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք, հարմարեցված գրենական պիտույքներ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում հստակ սահմանված են նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները: «Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի

երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով»[7]: Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն
2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5) թվային և մեդիա կարողունակություն
6) մշակութային կարողունակություն
7) մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն
8) տնտեսական կարողունակություն
9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Ըստ էության այս կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն, սակայն հարկ է նկատել, որ ուսուցման ու զարգացման գործընթացում դրանք մեկ ամբողջություն են, քանի որ մեկը լրացնում է մյուսին, դառնում շարունակողն ու ամբողջացնողը: Լեզվական և հաղորդակցական կարողունակության ձևավորմամբ խթանվում է նախադպրոցականի կապակցված խոսքը, երկխոսել և մենախոսելու կարողությունը, ինչն էլ սոցիալականացման հենքն է: Ստացվում է, որ այս կարողունակության ձևավորմամբ խթանվում է նայև մյուս կարողունակությունների ձևավորումը:

Նախադպրոցականի համար սահմանված կրթական ու զարգացման ոլորտներից բացի չափորոշչում ամրագրված են դրանցից ակնկալվող երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները՝ ըստ նախադպրոցական տարիքի փուլերի: Նախադպրոցական կրթության բովանդակությունն իրենից ներկայացնում է նախադպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման և կրթական ընդհանուր նպատակներից բխող գիտելիքների, կարողությունների, հմտությունների նաև արժեքային համակարգի ձևավորում:

«Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.

[7] Նույն տեղում:

2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.

3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ»[8]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի պլանավորման հենքը չափորոշիչն է: Դրանում ամրագրված դրույթներն ու սկզբունքները պարտադիր են նախադպրոցական կրթության պլանավորման համար: Յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի, նպատակային էքսկուրսիայի կամ տոնակատարության նպատակը պետք է բխի նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունից, վերջինների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վերջնարդյունքներն ունենալու ակնկալիքվ:Կրթության ու զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնվեն նրանց հետ տարվող անհատակողմներեշիչ աշխատանքների ու մշտադիտարկումների արդյունքները: Երեխաները պետք է բնականոն ինտեգրվոն սոցիալական միջավայրին, ունենան տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կապակցված, ֆիզիկական պատրաստվածություն, իմանան ու ճանաչեն ազգային ավանդույթներն ու իրազեկ լինեն համամարդկային արժեքներին, ունենան տրամաբանական ու ստեղծագործական մտածողություն:

Այս ամենն ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդամանկավարժական մոտեցումներ, ունենան մասնագիտական աճ, ինքնակրթվեն և արդյունավետ կերպով համագործակցեն միմյանց հետ:

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Ուսուցման ու զարգացման գործընթացի պլանավորումն անչափ կարևոր նախապայման է նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Սա առաջին հերթին հստակ նախանշում է նպատակների, խնդիրների և ակնկալվող

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=152575 «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ:

վերջնարդյունքների, պարապմունքին կիրառվող մեթոդամանկավարժական մոտեցումները, դիդակտիկ ու զննական պարագաները և այլ հարցեր: Այսպես նախադպրոցական մանկավարժի աշխատանքը դառնում է պլանավորված, կանոնակարգված ու կանխատեսելի: Ուսումնական գործընթացի պլանավորումը նաև բարձրացնում է մանկավարժի մասնագիտական որակները, թույլ տալիս, որ վերջինս փնտրի ու գտնի ուսուցման բովանդակությանը համապատասխանող խթանիչ միջոցներ, պարապմունքը հետաքրքիր ու չկրկնվող անցկացնելու ձևեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավաժը, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, հիմք է ընդունում նախադպրոցական կրթական չափորոշչային ոլորտները, կրթության բովանդակությունը և պահանջվող կարողունակությունները: Առավել ծավալային պլանավորում են պահանջում հանդեսները, նպատակային էքսկուրսիաները, որոնց ընթացքում նույնպես ապահովվում է նախադպրոցականների կրթության ու զարգացման գործընթացը:

Նախադպրոցական կրթության մեջ կարևոր բաղադրիչ է նաև ինտեգրված ուսուցումը: Այս պարագայում ուսումնական պարապմունքը պլանավորվում է մի քանի մանկավարժների կողմից, մեկ պարապմունքի շրջանակներում իրականացվում է բազմաբաղադրիչ մոտեցում: Ինտեգրված ուսումնական պարապմունքները նպաստում են սաների համակողմանի զարգացմանը, խթանում գործնական կարողություններին, զարգացնում պատկերավոր մտածողությունը:

Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերա-կանգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց (երաժշտության, գրականության, նկարչության ստեղծագործությունների միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է «տրամադրությունը»):

Մերօրյա ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանակավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր պարապմունքը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված պարապմունքն անցկացնող ուսուցիչների պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:

Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական կապերով: Ուստի պարապմունքների պրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ աշակերտի մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց:

Այսօր մանկապարտեզներում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչն առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

● միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)

●բազմառարկայական-(երկուսից ավել առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն)

Այսպիսով, ուսուցման ու զարգացման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժների մասնագիտական որակներից, դրանք զարգացնելու, նոր որակի բերելու մղումներից, ուսումնական պարապմունքի պլանավորման ու նախագծման ընթացքում նրաց ջանքերից:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դաստիարակի մանկավարժական աշխատանքի մեկօրյա պլանավորում

Թեմա՝ Հովհ. Թումանյանի «Ուլիկը» հեքիաթը

Նպատակը՝

- Ընտրված ժամանակահատվածում սաներին ծանոթացնել Հովհ. Թումանյանի կենսագրությանը, «Ուլիկը» հեքիաթին
- Հարստացնել սաների բառային պաշարը՝ կիրառելով խաղային տեխնոլոգիաներ, դերախաղ
- Խթանել սաների պատմելու կարողությունը, զարգացնել ստեղծագործական, քննադատական մտածողությունը,
- Զարգացնել սաների երաժշտական ունակությունները, նկարելու հմտությունները, մանր մոտորիկան,
- Ձևավորել վերջիններիս արժեհամակարգը, տալ գաղափար լավի, վատի, չարի, բարու մասին:
- Խրախուսել ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը:
- Ժամանակ հատկացնել խմբային խաղերին, ժամանցին ու ֆիզկուլտդադարներին:
- Նպաստել սաների սոցիալականացմանը:
- Խթանել հաղորդակցական ունակությունները, կարծիք, տեսակետ հայտնելու կարողությունը:

Մեկօրյա պլանավորման խնդիրները՝

- Կիրառել ժամանակակից մեթոդական հնարներ, խաղային տեխնոլոգիաներ, ՏՀՏ բաղադրիչ:
- Զբոսնել երեխաների հետ, կատարել ֆիզիկական վարժություններ
- Կիրառել զննական պարագաներ, դիդակտիկ միջոցներ, թեմատիկ խաղալիքներ:

Թեմայի ուսումնասիրության վերջնարդյունքը՝

Կազմակերպել ցուցադրական պարապմունք, որը կկրի ինտեգրված բնույթ՝ ներառելով հետևյալ բաղադրիչները՝

- Երգ
- Պար
- Ասմունք
- Բեմադրություն
- Նկարչություն
- Ապլիկացիա
- Կինոդիտում

Ակնկալվող վերջնարդյունքներ՝

Ակնկալվում է սաների մեջ զարգացնել հետևյալ կարողունակությունները՝

- լեզվական և հաղորդակցական կարողունակություն
- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- մշակութային կարողունակություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը պետք է համահունչ լինի վաղ մանկության զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող ժամանակակից կարևորագույն գործընթացներին: Կարող ենք արձանագրել, որ նախակրթական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար հարկավոր է, որ մանկավարժական աշխատողը մանրակրկիտ պլանավորի իր աշխատանքը:

Նախադպրոցական կրթության չափորոշչի փոփոխությունը պայմանավորված է հանրակրթության պետական նոր չափորոշչի ընդունմամբ, որտեղ նախադպրոցական կրթությունը դիտարկվում է հանրակրթության նախնական աստիճան և նպատակ ունի ապահովել նախադպրոցական կրթության համակարգից երեխայի սահուն անցումը դեպի հանրակրթություն:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում:

Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը մանկապարտեզում նույնպես անկյունաքարային է, որը թույլ կտա սաներին սոցիալականացվել: Այսպիսով, դաստիարակը հիմք է նախապատրաստում, որ առաջիկայում նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսք, լինի ավելի ինքնուրույն ու կազմակերպված:

Վերոհիշյալից ելնելով՝ եկանք այն եզրակացության, որ ժամանակի կրթական մարտահրավերներով պայմանավորված՝ մեծ դեր ունի նախադպրոցական մանկավարժների ինքնակրթվելու, նորարարություններն ու կրթական ժամանակակից մոդելներն ուսումնասիրելու ցանկությունն ու անհրաժեշտությունը, որն էլ կնպաստի ուսումնադաստիարակչական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
3. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
4. Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
5. Նոր չափորոշչով մանկապարտեզում երեխաները կսովորեն մեդիագրագիտություն, կծանոթանան օրենքի գաղափարին. Նախագիծ, https://www.armtimes.com/hy/article/208780
6. ՀՀ կառավարության որոշումը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին, https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/9368835223ec84664689175ec655a9e8.pdf, ընդ. 13.05.2021